ընդհանուր զեկավար սկզբունքները այս տեսակէտից, մանաւանդ որ այժմս արդէն մշակուած է եւ շուտով գործադրութեան պիտի դրուի Թիւրքիայից պատերազմի իրաւունքով գրաւուած վայրերի ժամանակաւոր կառավարութեան նախագիծը*):

Առաջադրուող խնդրի ամենամեծ դժուարութիւնն ու բարդութիւնը հայկական հարցը դնելու եւ լուծելու մէջ է: Առած իր բովանդակ ծաւալով՝ նա մի քիչ դուրս է գալիս ռուսական ներքին պետական կեանքի սահմաններից թէ՛ այն առաջաւոր դերի տեսակէտից, որը վիճակուեց Ռուսաստանին հայկական բարենորոգումները Թիւրքիայում գլուխ բերելու ժամանակ եւ թէ՛ այն պատճառով, որ հայերի մի մասը մնում է Փոքր Հայաստանում ուրիշ պետութեան իշխանութեան տակ: Մեզ բաժին հասնող հայկական նահանգների գալիք կազմակերպութեան միջոցին մենք չենք կարող հաշուի չառնել այս երկու պարագաները: Այս առթիւ թոյլ եմ տալիս ինձ ներկայացնելու ձերդ կայսերական բարձրութեան բարեյաջողութեան հետեւեալ նկատառումները:

Ինչպէս յայտնի է, որպէս Ծայրագոյն նշանակէտեր, որոնց միջեւ մեզ մօտ տրւում է սովորաբար հայկական հարցի լուծումը, հանդիսանում են հետեւեալ երկու հոսանքները. մէկը հայ ազգայնականների ձգտումն է՝ կատարեալ ինքնավարութիւն Ռուսաստանի հովանաւորութեան տակ 1913 թուին մեր կողմից առաջարկուած բարենորոգումների ոգով. միւսը՝ սրան հակառակն է, որը հայերի քաղաքական կարեւորութիւնը հասցնում է զէրօի եւ աշխատում է նրանց տեղը դնել մահմեդականներին:

Ինձ թւում է, որ սոյն հարցի լուծումը այս կամ այն ուղղութեամբ բոլորովին չի համապատասխանում Ռուսաստանի պետական շահերին ոչ ներքին, ոչ արտաքին քաղաքականութեան տեսակէտից: Ինչ որ վերաբերւում է հայերին լայն ինքնավարութիւն տրամադրուելուն, չպէտք է մոռանալ, որ այժմս Ռուսաստանի կողմից նուաճուած Մեծ Հայաստանում, հայերը երբեք մեծամասնութիւն չեն կազմել, իսկ պատերազմի ընթացքին Թիւրքերի կողմից նրանց վերաբերմամբ եւ հէնց իրենց հայերի վկայութեամբ ահաւոր չափերով կիրառուած պատժական միջոցներից յետոյ, այս համեմատութիւնը է՛լ աւելի է փոխուած ո՛չ ի նըպաստ հայերի, որոնք այժմ հազիւ կազմեն ազգաբնակութեան նոյնիսկ մէկ քառորդը: Նման պայմաններում հայկական ինքնավարութիւնը իրապէս կը յանգի նրան, որ մեծամասնութիւնը անարդարօրէն կը ստրկացուի փոքրամասնութիւնից:

Միեւնոյն ժամանակ կարելի չէ համաձայնուել այն մտքին, ըստ որի հայկական տարրը պէտք է զոհաբերուի մահմեդականութեան եւ որ նրանց միջեւ մղուող պայքարում կառավարական իշխանութիւնն պէտք է բռնէ վերջիններիս կողմը: Այդ պիտի նշանակէր հայերին դնել աւելի վատ պայմանների մէջ, քան այն, որ ունէին Թիւրքական տիրապետութեան ժամանակ, եւ ստիպել, որ նախանձով հայեացք ուղղեն դէպի արտասահմանեան ազգակիցները, որոնց այսպէս կամ այնպէս պիտի ապահովուի ազատ զարգացում: Բացի այդ, հարցի նման լուծումը կարող է Ռուսաստանը դնել անյարմար դրութեան մէջ, որովհետեւ բոլոր պետութիւններից նա ամենից աւելի եռանդուն կերպով պաշտպանում էր Թիւրքահայաստանում լայն բարենորոգումներ անցկացնելու խնդիրը:

Այս նկատումներով ինձ թւում է, որ լաւագոյն ելքը մեզ համար կը լինէր այն, որ Թիւրքիայի նորանուաճ շրջանների կարգաւորման միջոցին առանձնապէս խիստ կերպով դե-

*) Սա այն պատմական ընդհանուր-նահանգապետութիւնն էր՝ հաստատուած դերագոյն հրամանատարի սպայակոյտի պետ զօր. Մ. Ալեքսիյեւի 5 Յունիս 1916 թ. թիւ 739 հրամանագրով, որ ծրագրել էր հայկական նահանգներում բնակեցնել ռուս կազակներ եւ կազմակերպել Եփրատի ու Տիգրիսի կազակութիւնը: Յետագային, 1917 թ. Փետրուարեան յեղափոխութիւնից յետոյ, այս ընդհանուր-նահանգապետութիւնը, փաստօրէն, վերածուեց Թիւրքահայկական ինքնավարութեան եւ, եթէ Հոկտեմբերեան յեղաշրջումը չլինէր, կը դառնար կորիզը հայկական պետականութեան: Ս. Վ.